ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նախադասությունները որպես հաղորդակցման միավորներ ունեն ձևավորման, կառուցվածքային-հնչերանգային մի շարք առանձնահատկություններ, որոնց հիման վրա էլ լեզուները տարբերակում են նախադասությունների բազմաթիվ տեսակներ։ Զանազան նպատակներով կատարված յուրաքանչյուր տարբերակման, բաժանման հիմքում ընկնում է մեկ սկզբունք։ Մի դեպքում կարող է լինել այն հիմունքը, թե նախադասությունը, որպես հաղորդակցման ինքնուրույն միավոր, ինքնուրույն գործածություն չունեցող, բայց միտք արտահայտող քանի միավորներից է կազմված։ Այդ սկզբունքով տարբերակված նախադասությունները լինում են պարզ և բարդ։ Մեկ այլ դեպքում տարբերակման սկզբունք կարող է դառնալ այն հանգամանքը, թե նախադասության մեջ կա՞ն արդյոք երկրորդական անդամներ, եթե կան, ապա նման նախադասությունները կոչվում են ընդարձակ, ի հակադրություն համառոտի։ Նախադասությունները լինում են պատմողական, հրամայական, հարցական և բացականչական։ Այս բաժանման հիմքում էլ ընկած է այն սկզբունքը, թե նախադասությունը ինչ նպատակով է արտասանվում, ինչ հնչերանգ ունի։ Ըստ նախադասության գլխավոր անդամների առկայության՝ տարբերակում ենք նաև միակազմ և երկկազմ նախադասություններ։

Նախադասությունների բաժանման, առանձնացման հիմքում կարող է ընկած լինել նաև այն հիմունքը, թե նրանցով արտահայտված իրողությունը վերաբերվում է որևէ դեմքի՞, թե՞ ընդհանուրին՝ առանց կոնկրետ դեմքը նշելու։ Որևէ դեմքի վերաբերվելը, ինչպես գիտենք, քերականորեն արտահայտվում է բայի դիմավոր ձևերով կամ օժանդակ բայով։ Եթե նախադասությունը ունի դիմավոր բայով կամ օժանդակ բայով ու որևէ այլ խոսքի մասով արտահայտված ստորոգյալ, կոչվում է դիմավոր։ Բայց կան նաև այնպիսի նախադասություններ, որոնք չունեն դիմավոր բայով կամ օժանդակ բայով ու որևէ այլ խոսքի մասով արտահայտված ստորոգյալ։ Նման նախադասությունները կոչվում են անդեմ, քանի որ նրանք ցույց են տալիս ընդհանուրին վերաբերող գործողություններ, արտահայտված անորոշ դերբայով, կամ նշում են առարկաներ, հաստատում նրանց գոյությունը առանց օժանդակ բայի։ Այդ տեսակի նախադասությունները լայն գործածություն են ստացել հատկապես վերջին շրջանում։ Անցյալում անդեմ նախադասությունները ունեցել են սահմանափակ կիրառություն։ Մասամբ այս երևույթն է պատճառը, որ հայ քերականները, այդ թվում և պրոֆ. Մ. Արեղյանը, անուշադրության են մատնել այդ նախադասությունները և առանձին տեսակ չեն համարել դրանք։

Բայց անդեմ նախադասությունները հաղորդակցական ինքնուրույն միավորներ չհամարելու հիմնական պատճառն այն է եղել, որ բայականությունը դիտվել է նախադասության հիմք, առանց դիմավոր բայով արտահայտված ստորոգյալի նախադասություն չի ճանաչվել[2]։ Պրոֆ. Արեղյանը գրում է. «Խոսքի էությունն է ստորոգումը։ Առանց ստորոգման խոսք չկա։ Ստորոգումն արտահայտվում է միայն մի առանձին խմբի կամ տեսակի բառերով, որոնք կոչվում են բայ», «Առանց բայի խոսք չկա...»[3]։ Նույն կարծիքին է նաև մեկ ուրիշ ականավոր հայ լեզվաբան՝ պրոֆ. Հ. Աճառյանը. «Նախադասության մեջ ամենահիմնական բառը դիմավոր բայն է, առանց որի նախադասություն չի լինի»[4],— գրում է նա։

---

1 Խոսքն այն մասին չէ, որ իրաղրությունից կարող ենք եզրակացնել, թե անորոշ դերբայով արտահայտված գործողությունը ում է վերաբերում։ Խոսքը քերականական ձևավորվածության մասին է։

2 Այդ կարծիքին է այժմ լեհ լեզվաբան Յ. Կուրիլովիչը։ Տե՛ս Курилович, Очерки по лингвистике, сборник статей, М., 1962, էջ 55—56։

3 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 361—362։

4 Հ. Աճառյան, Գրաբարի ուսուցիչ, Երևան, 1954, էջ 5։

Նախադասության ամենաէական հատկանիշը համարելով դիմավոր բայով արտահայտված ստորոգյալի գոյությունը, և՛ Աբեղյանը և՛ Աճառյանը, պարզ է, չպետք է ընդունեին անդեմ նախադասությունները որպես նախադասության առանձին տեսակ։

XIX դարի վերջին և XX դարի սկզբի որոշ հայ քերականներ գործածել են «անդեմ» տերմինը, սակայն ոչ այժմյան իմաստով։ Անդեմ նախադասություն ասելով նրանք ի նկատի են ունեցել անենթակա նախադասությունները[5]։ Հայ քերականագիտությունը անդեմ նախադասությունների ուսումնասիրության հարցերով սկսել է զբաղվել հատկապես վերջին տարիներս։ Պրոֆ. Գ. Սևակի «Հայոց լեզվի շարահյուսություն» (Երևան, 1936 թ.) դասագրքից հետո, ուր առաջին անգամ հայերենում առանձնացվեցին այդ նախադասությունները, անդեմ նախադասությունների հետ կապված շատ հարցեր քննարկել և ուսումնասիրել են գոց. Ս. Աբրահամյանը՝ «Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր» գրքում և դոկտոր Վ. Առաքելյանը՝ «Հայերենի շարահյուսություն» գրքի երկրորդ հատորում։

Ավանդական հայ քերականության մեջ նախադասություն ընդհանրապես համարվել է ստորոգում ունեցող բառակապակցությունը։ Ստորոգումը, ինչպես գիտենք, հատկանիշի վերագրումն է ենթակային այն կաղապարի նախադասություններում, ինչպես «Ծառը կանաչեց» և «Ծառը կանաչ է»։ Ստորոգումը քերականական-շարահյուսական այնպիսի կատեգորիա է, որը կապվում է քերականորեն արտահայտված ստորոգյալի հետ։ Ստորոգյալը, հայտնի է, արտահայտվում է բայի խոնարհված ձևերով կամ օժանդակ ու վերացական բայերով և այլ խոսքի մասով։ Իսկ քանի որ անդեմ նախադասությունները չունեն ստորոգյալ, հետևաբար չեն կարող ունենալ ստորոգում և, պարզ է, որպես նախադասության առանձին տեսակ ճանաչվելու և ուսումնասիրության ոլորտից դուրս պետք է մնային։ Այնինչ ստորոգում չունենալը անդեմ նախադասությունների հիմնական և ամենարնորոշ առանձահատկությունն է։ Ահա ինչ է գրում պրոֆ. Գ. Սևակը. «Չեղչված ստորոգյալով նախադասություններից տարբերվում են այն նախադասությունները, որոնք ստորոգում ընդհանրապես չունեն...»[6] (ընդգծումը մերն է — Հ. Հ.)։

Վերցնենք հետևյալ անդեմ նախադասությունները. «Ոտտար մայրեր, օտար մարդիկ, օտար լեզու, հայերեն չեն խոսում, հայ երգ չի լսվում։ Մաղկավանառներ ու ծաղիկներ, բայց ոչ մի կուժ-կոտրուկ, եաբսնածաղիկ, երիցուկ, տուղտ։ Ասուվուծամոր տանար, ֆիվերին բանղազուշակ, մարե ֆիմերներ ե աղորելու շտապող մարդիկ» (Ռ. Արամյան, Ջթամբած ձիեր)։ Ընդգծված նախադասությունները, որոնք հաղորդակցական ինքնուրույն միավորներ են և արտահայտում են հարաբերականորեն ավարտուն միտք, չունեն ստորոգում, ուղղականաձև դրված գոյականներին որևէ հատկանիշ չի վերագրվում։ Իսկ ինչի՞ շնորհիվ են այդ բառակապակցությունները դառնում նախադասություններ։ Ահա մի հարց, որը լուսաբանման կարիք է զգում։

Այդ և նման բոլոր նախադասությունները չունեն ստորոգում, բայց ունեն ստորոգելիություն (предикативность)։ Ստորոգումը և ստորոգելիությունը տարբեր երևույթներ են, տարբեր կատեգորիաներ։ Ստորոգումը շարահյուսական միջոց է, հանդիսանում է ստորոգյալի հատկությունը և գոյություն ունի միայն այն նախադասություններում, ուր կա ստորոգյալ։ Իսկ ստորոգելիությունը քերականական-տրամաբանական երևույթ է, որը հաղորդված մտքին տալիս է հարաբերականորեն ավարտուն լինելու հատկություն և չի կապվում քերականական ստորոգյալի հետ։ Այն կապված չէ առհասարակ նախադասության որևէ անդամի հետ։ «...Ստորոգելիությունը կարող է արտահայտված լինել առանց ստորոգյալի, ստորոգելիություն կա նախադասությունների բոլոր տեսակներում, նույնիսկ այսպես կոչված բառ-նախադասություններում»[7]։ «Նախադասությունը ձևավորող ստորոգելիության դերն ու նշանակությունը կայանում է նրանում, որ նախադասության բովանդակությունը վերագրում է իրականությանը»[8]։

Ստորոգելիության և ստորոգման հարցերն ավելի հանգամանորեն քննարկում է Վ. Պանֆիլովը։ Նա գրում է. «...Եթե ստորոգելիությունը այն է, որ յուրաքանչյուր նախադասություն դարձնում է նախադասություն և առանց որի չի արտահայտվի ավարտուն միտք, ապա ստորոգումը

---

5 Մելիք-Թանգյան, Աշխարհարարի քերականութիւն, Շուշի, 1893։ Ստ. Պալասանյան, Գործնական քերականութիւն հայերեն լեզվի, Թիֆլիս, 1869 և այլն։

6 Գ. Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, դասագիրք, Երևան, 1936 և հետագա հրատարակություններ։

7 Современный русский язык, ч. II, М., 1964, էջ 257։

8 «Грамматика русского языка», т. II, ч. I, Изд. АН СССР, М., 1960, էջ 80։

բնութագրում է միայն նախադասությունների այն տեսակները, որտեղ ստորոգյալը առանձնանում է որպես շարահյուսական անդամ, բայց հատուկ չէ այն նախադասությանը, ուր չկա ստորոգյալ»[9]։

Ուրեմն, անդեմ նախադասությունները մտքի արտահայտման ինքնուրույն միավորներ են ոչ թե այն բանի շնորհիվ, որ ունեն ստորոգում, այլ որ նրանք ունեն ստորոգելիություն, որի շնորհիվ նախադասության բովանդակությունը վերադրվում, հարաբերում է իրականությանը։ Վ. Պանֆիլովը ստորոգումը իրավացիորեն համարում է ստորոգելիության դրսևորման ձևերից մեկը։ Ստորոգումը և ստորոգելիությունը կարող են համընկնել (բայց ոչ նույնանալ) միայն այն դեպքերում, երբ համընկնում են տրամաբանական սուբյեկտը և պրեդիկատը քերականական ենթակայի և ստորոգյալի հետ։ Ինչպես գիտենք, այդ համընկնումը շատ դեպքերում, այդ թվում և անդեմ նախադասությունների ժամանակ, չկա[10]։ Իսկ եթե ստորոգելիությունը չի համընկնում ստորոգման հետ, այսինքն ստորոգումը ստորոգելիության դրսևորման ձև չէ, ապա ինչպե՞ս է արտահայտվում, ի՞նչ միջոցով։ Լեզվաբանական գրականության մեջ որպես այդպիսի միջոցներ նշվում են հնչերանգը (ինտոնացիան) և բառերի դասավորության կարգը[11]։ Քանի որ երկրորդ միջոցը այնքան էլ բնորոշ չէ հայերենին, ապա ցույց տանք միայն առաջին միջոցի՝ հնչերանգի դերը։

Հնչերանգի քերականական դերը համեմատաբար լավ է ուսումնասիրված ռուսական քերականագիտության մեջ, իսկ հայ քերականները անուշադրության են մատնել այն։ Առաջին անգամ պրոֆեսոր Ս. Աբրահամյանն է անդրադարձել հնչերանգին, որը «...բառերի կապակցությանը կամ բառին տալիս է ամփոփ, ավարտուն լինելու հատկանիշ»[12], հետևաբար և բառը կամ բառակապակցությունը դարձնում է նախադասություն։ Հնչերանգը նախադասության ձևավորման կարևորագույն միջոցն է ընդհանրապես։ Դիմավոր նախադասություններին նա տալիս է միայն ավարտուն լինելու հատկանիշ, իսկ նախադասությունը հիմնականում ձևավորվում է ստորոգման շնորհիվ։ Իսկ քանի որ անդեմ նախադասությունները չունեն քերականորեն ձևավորված ստորոգում, հնչերանգի դերը մեծ է նրանց ձևավորման գործում։ Հիշենք ականավոր լեզվաբան Ա. Մ. Պեշկովսկու այն դիտողությունը, թե «...Ինչքան պարզ է արտահայտված որևէ շարահյուսական նշանակություն մաքուր քերականական միջոցներով, այնքան թույլ կարող է լինել նրա հնչերանգային արտահայտությունը (ընդհուպ նրա լրիվ անհետացումը) և, ընդհակառակը, ինչքան ուժեղ է հնչերանգային արտահայտությունը, այնքան թույլ կարող է լինել քերականակարը (նույնպես ընդհուպ լրիվ բացակայությունը)»[13]։ Իհարկե, մենք այն կարծիքին չենք, թե հնչերանգը քերականական միջոց չէ, բայց մեր կարծիքով Ա. Մ. Պեշկովսկին ճեռականական ասելով ի նկատի ունի միայն քերականորեն ձևավորված ստորոգյալը։

Ստորոգելիության արտահայտման միջոցը անդեմ նախադասություններում յուրահատուկ հնչերանգն է, որը կատարում է նույն դերը, ինչ դիմավոր նախադասություններում ստորոգումը։

«Ուղղահայաց վայրէջք և վերելք, բավալգոր անկում և հանկարծ հորիզոնական թռիչք» (Բ. Հովսեփյան, Սերմնացանները չվերադարձան), «Մինչև ե՞րբ հանդուրժել այս անեռերելի թերությունները, մինչև ե՞րբ չօգտագործել հսկայական հնարավորություններն ու ռեզերվները» («Ս. Հայաստան», 1964, № 285)։

Բերված օրինակները, ինչպես տեսնում ենք, չունեն ստորոգյալ, հետևարար չունեն և ստորոգում։ Բայց նրանք միտք արտահայտող հաղորդակցական ինքնուրույն միավորներ են, նախադասություններ՝ ստորոգելիության շնորհիվ, որը ձևավորվում է յուրահատուկ հնչերանգով։ Ուրեմն, անդեմ նախադասությունների մյուս առանձնահատկությունն այն է, որ դիմավոր նախադասությունների ստորոգելիության արտահայտման միջոցի՝ ստորոգման փոխարեն ունեն յուրահատուկ հնչերանգ։

Նախադասության կարևոր հատկանիշներից է եղանակայնությունը, խոսողի վերաբերմունքը հաղորդվող իրականության նկատմամբ, որը սովորաբար արտահայտվում է բայի եղանակային ձևերով, ինչպես նաև եղանակավորող բառերով։ Բայց քանի որ անդեմ նախադասությունները չունեն դիմավոր բայեր, հաճախ չեն ունենում նաև եղանակավորող բառեր, ապա պետք է ունե-

---

9 В. З. Панфилов, Грамматика и логика, М.—Л., 1963, էջ 45։

10 Մեր նպատակից դուրս է այս հոդվածում քննարկել նախադասության ու դատողության փոխհարաբերության հարցը։ Նշենք, որ ընդունվում է նաև միանդամ դատողության գոյությունը։

11 Г. В. Колшанский, Логика и структура языка, М., 1965, էջ 150։

12 Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1962, էջ 26։

13 А. М. Пешковский, Интонация и грамматика, «Известия русского языка и словесности АН СССР, Л., 1928, էջ 470։

նան եղանակայնության արտահայտման հատուկ միջոց։ Այդ դերը նույնպես կատարում է հնչերանգը։

Անդեմ նախադասությունների եղանակայնությունը գերազանցապես արտահայտվում է հնչերանգի միջոցով։

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ անդեմ նախադասություններում ենթակայի և ստորոգյալի գոյության մասին միասնական կարծիք չկա։ Այսպես, ակադ. Շախմատովը անվանական անդեմ նախադասության առանցքային բառը համարում է և՛ ենթակա, և՛ ստորոգյալ, առանձնացնելով ենթակայով անստորոգյալ և ստորոգյալով աենթակա նախադասություններ, որոնք ձևով նույնանում են, բայց հնչերանգով, կոնտեքստային միջավայրով տարբերվում։ Ենթակա նախադասությունը արտահայտվում է ձայնի բարձրացումով, ստորոգյալ նախադասությունը՝ իջեցումով[14]։ Հ. Պաուլը ավելի հեռուն է գնում. իրադրությունը նա համարում է անդեմ նախադասության գլխավոր անդամ։ «Մարդկային խոսքում,— գրում է նա,— կան այնպիսի գատողություններ, որոնցում ինչպես խոսողի, այնպես էլ լսողի համար արտահայտությունը հանդիսանում է սուբյեկտ, իսկ գրությունը, իրադրությունը՝ պրեդիկատ»[15]։ Իրադրությունը կարող է որոշակի նշանակություն ունենալ հաղորդվածը ավելի հասկանալի դառնալու գործում, սակայն նա քերականական միջոց չէ և, հետևաբար, քերականության մեջ չպետք է տեղ գտնի։

Հայ քերականներից դոկտոր Վ. Առաքելյանը անորոշ դերբայը համարում է բայական անդեմ նախադասությունների ստորոգյալ[16]։ Սակայն դերբայը, առավել ևս անորոշ դերբայը, առանց օժանդակ բայի ստորոգյալ լինել չի կարող։ «Ստորոգման համար կարևոր են բայի մասնավորապես եղանակային ձևերին հատուկ քերականական կատեգորիաները՝ եղանակ, դեմք, ժամանակ, թիվ։ Եվ ստորոգումը որպես շարահյուսական կատեգորիա ձևավորվում է բայի ձևաբանական այս կատեգորիաների հիմքի վրա»[17]։

Ուրեմն, անդեմ նախադասությունները, որոնք չունեն ստորոգում, չեն կարող ունենալ ստորոգյալ։ Իրականում ենթական և ստորոգյալը որպես նախադասության երկու բևեռներ կազմում են հակադրամիասնություն[18]։ «Սուբյեկտը և պրեդիկատը որպես անդամներ կարող են լինել միասին կամ չլինել, բայց մեկի գոյությունը առանձին անհնար է»[19]։ Միանգամայն ճիշտ են այս դիտողությունները։ Ուրեմն անդեմ նախադասությունների, որպես մտքի արտահայտման, հաղորդակցման միջոցի կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրանք քերականորեն արտահայտված ենթակա և ստորոգյալ չունեն, և չպետք է նրա կառուցվածքային հատկանիշները լխեցնենք դիմավոր նախադասությունների կաղապարներից։

Այսպիսով, անդեմ նախադասությունները ունեն ձևավորման և կառուցվածքային մի շարք առանձնահատկություններ, որոնցով տարբերվում են դիմավոր նախադասություններից։

Առաջին. չունեն քերականորեն արտահայտված ստորոգում և մտքի արտահայտման ու հաղորդակցական միավորներ են դառնում ստորոգելիության շնորհիվ։ Ստորոգելիությունը հաղորդված իրողության հարաբերությունն է իրականության նկատմամբ։

Երկրորդ. անդեմ նախադասությունները ունեն յուրահատուկ հնչերանգ, որի դերը մեծ է։ Նախ՝ նա ստորոգելիության արտահայտման միջոց է։ Ապա՝ արտահայտում է եղանակայնություն և երրորդ՝ մտքին տալիս է հարաբերականորեն ավարտուն լինելու հատկանիշ։ Յուրահատուկ հնչերանգի շնորհիվ է միայն ստորոգում չունեցող բառը կամ բառակապակցությունը դառնում հաղորդակցման միավոր։

Երրորդ. անդեմ նախադասությունները ունեն կառուցվածքային այն առանձնահատկությունները, որ չունեն ենթակա և ստորոգյալ. ունեն գոյականով կամ այլ խոսքի մասով արտահայտված առանցքային բառ, որին որևէ հատկանիշ չի վերագրվում և անորոշ դերբայով արտահայտված առանցքային բառ, որը քերականորեն չի վերագրվում որևէ դեմքի, առարկայի։ Անդեմ նախագա-

---

[14] Ա. Ա. Шахматов, Синтаксис русского языка, Л., 1941, էջ 52։

[15] Տե՛ս Галкина-Федорук, Безличные предложения в современном русском языке, М., 1958, էջ 47։

[16] Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատ. II, Երևան, 1964, էջ 58։

[17] Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 20։

[18] Գ. Սնակ, Շարահյուսության մի քանի հարցեր մարքս-լենինյան իմացաբանության լույսի տակ, Լեզվի ինստիտուտի աշխատությունների ժողովածու, հատոր 4, 1949, էջ 14։ Է. Ղազարյան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1963, էջ 422։

[19] Г. Колшанский, Логика и структура языка, էջ 170։

ությունների ճանաչման, դիմավոր նախադասություններից նրանց տարբերակման հիմքում պետք է լինեն այս առանձնահատկությունները։

Ասացինք, որ անդեմ նախադասությունները ունենում են մեկ առանցքային բառ, որը լինում է ուղղականաձև դոյական, անորոշ դերբայ, երբեմն էլ այլ խոսքի մաս։ Ըստ առանցքային բառի, անդեմ նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ անվանական և բայական։ Իսկ ի՞նչ լրացումներ կարող են ունենալ առանցքային բառերը։ Առաջին հայացքից հարցը պարզ է թվում։ Եթե այն դոյական է, պետք է ունենա դոյականին հատուկ լրացումներ՝ որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, եթե բայ է, ապա պետք է ունենա բային հատուկ լրացումներ՝ խնդիրներ, պարագաներ։ Բայց իրականում այսպես չէ։ Անվանական անդեմ նախադասություններում, ուր չկա որևէ բայ, լինում են նաև բային հատուկ լրացումներ, հատկապես տեղի, ժամանակի պարագաներ և երբեմն էլ անուղղակի խնդիրներ։ Ինչպե՞ս բացատրել այս երևույթը։ Դոկտոր Վ. Առաքելյանը նման նախադասությունները, որոնք բնորոշվում են որևէ առարկայի գոյության, լինելիության, գտնվելու, ժամանելու մասին, անվանական չի համարում ստորոգյալին (բային) բնորոշ լրացումներ ունենալու պատճառով, այլ անվանում է ինքնուրույն թերի նախադասություններ[20]։ Հետաքրքրական է այն, որ այդ նախադասությունները չեն ունենում, ասենք, պատճառի կամ ձևի պարագաներ, այլ սովորաբար տեղի և ժամանակի պարագաներ։ Այս հանգամանքը կարելի է բացատրել նրանով, որ առհասարակ առարկաները ու երևույթները գոյություն ունեն միայն որևէ տեղում և որևէ ժամանակի մեջ։ Տեղը և ժամանակը մատերիայի գոյության օբյեկտիվորեն ռեալ ձևերն են, և տեղ ու ժամանակ ցույց տվող բառերի գոյությունը չի ենթադրում բայ-ստորոգյալի գոյություն և՝ «Հետո՝ ուսումնառության, քրտնաջան ու համառ աշխատանքի երկար տարիներ» («Ս. Արվեստ», 1961, № 9), «Օվ ահա, առաջին քայլը բաց տիեզերքում» («Ս. Արվեստ», 1965, № 4), «Նորից ավտոմեքենայի շչակի ձայները» («Ս. Գրականություն», 1964, № 12, էջ 15) ու նման այլ նախադասություններ անվանական անդեմ նախադասություններ են, թեև ունեն ժամանակի և տեղի պարագաներ։

Անվանական անդեմ նախադասություններ պետք է համարենք նաև ողջույնի, անեծքի, բարեմաղթությունների և նման այլ արտահայտությունները, ինչպես նաև վաճառվող ապրանքների անունները, որոնք մտքի արտահայտման և հաղորդակցման միավոր են վաճառողի և գնողի համար։ Այսպես՝ «Խաղաղություն ձեզ, մեր ներախտ պապերս, Ձեզ՝ նրա չար գործին» (Թումանյան), «Ողջո՛ւյն արքագաշ Ալուն, հաղթանակ գործին Իլլիի» (Չարենց) և նման նախադասությունները անվանական անդեմ են, չնայած որ ենթադրվում է ստորոգյալի գոյություն, ասենք «լինի»։ Հնարավոր է, որ նման արտահայտությունները նախկինում ունեցել են այժմ ենթադրվող ստորոգյալը և եղել են դիմավոր նախադասություններ։ Դրա ապացույցը ստորոգյալի լրացում ձեզ, գործին, Ալուն բառերի առկայությունն է։ Բայց փաստն այն է, որ նրանք այժմ գործածվում են և իրենց արտահայտչական ու հաղորդակցական ֆունկցիաները կատարում են այդ տեսքով, լեզվում գոյություն ունեն այդ տեսքով, հետևաբար այդպես էլ պետք է ուսումնասիրվեն։ Ուրեմն ողջույնի, անեծքի, բարեմաղթությունների, հրաժեշտի և նման արտահայտությունները անդեմ նախադասություններ են։

• Անդեմ նախադասություններ են նաև փողոցներում և շուկաներում հաճախակի լսվող վաճառվող ապրանքների անվանումները՝ «Կա՞թ, լավ կա՞թ, էժան կարտոֆի՞լ, «Մածո՛ւն, ոչխարի անարատ մածո՛ւն», «Քաղցր խաղո՞ղ» և այլն, որովհետև նրանք նույնպես այդ ձևով են կատարում իրենց ֆունկցիան։ Կարո՞ղ ենք դրանց մեջ ավելացնել ստորոգյալ։ Կարող ենք, բայց նախադասության կառուցվածքը, ուրեմն և տեսակը, անմիջապես կփոխվի։ Այդ ստորոգյալը կարող է լինել և՝ կա, և՝ գնեցեք, և՝ վաճառում եմ բառերը, այսինքն այդ առանցքային բառը կարող է լինել և՝ ենթակա, և՝ խնդիր։ Հենց այդ անորոշությունն էլ մեզ հուշում է, որ չպետք է փորձել ստորոգյալ ավելացնել։ Օ. Եսպերսենը նշում է, որ բառը կարող է ենթարկվել արտակարգ համառոտման, երբ նա հեշտությամբ հասկացվում է իրադրության հետ կապված[21]։ Նույնը կարող ենք ասել նման անդեմ նախադասությունների առաջացման մասին։ Նախադասությունները էլ կարող են ենթարկվել համառոտման, եթե նրանք այդ ձևով էլ ծառայեն հաղորդակցմանը։ Հենց լեզվական այս երևույթն է պատճառը, որ երբեմնի դիմավոր նախադասությունները դարձել են անդեմ։ Նախադասությունների համառոտում կատարվում է նաև երկխոսության ժամանակ։ Հարցում հիշատակված առանձին բառեր, նախադասության անդամներ պատասխանում չեն կրկնվում։ Պատասխան նախադասությունները սովորաբար թերի են լինում ավելորդ կրկնություններից խու-

20 Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատոր II, էջ 68։

21 Տե՛ս Գ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հատ. II, Երևան, 1962, էջ 41

սափելու համար և առանձին չեն կարող գործածվել այն հնչերանգով, որով արտասանվում են երկախոսության ժամանակ։ Իսկ անդեմ նախադասությունները այդպես չեն, նրանք ունեն ինքնուրույն գործածություն, ավարտուն հնչերանգ։

Ինչպես նշեցինք սկզբում, անդեմ նախադասությունները բավականին մանրամասնորեն հետազոտված են ռուս քերականագիտության մեջ։ Այդ հարցերով զբաղվել են այնպիսի ականավոր լեզվաբաններ, ինչպիսիք են Ա. Մ. Պեշկովսկին, Ա. Ա. Շախմատովը, Վ. Վ. Վինոգրադովը, Ե. Մ. Գալկինա-Ֆեդորուկը, Ռուդներ և ուրիշներ։

Օգտագործելով ռուսական քերականագիտության նվաճումները այդ հարցում, չենք կարող արհեստականորեն ամեն ինչ տարածել հայոց լեզվի վրա։ Հայոց լեզուն ունի իր առանձնահատկությունները. նախադասության կառուցվածքի յուրահատուկ ձևերն ու այդ կառուցվածքն ստեղծող ուրույն միջոցները։ Թեև ժամանակակից հայերենում անդեմ նախադասությունները բավական գործածական են, բայց ունեն կիրառության այնպիսի ոլորտներ, ուր ավելի շատ, ավելի հաճախակի են գործածվում։ Անդեմ նախադասությունները ավելի շատ գործածական են նկարագրական բնույթի ստեղծագործություններում, դրամատիկական երկերում, ակնարկներում, հոգեբանական վերլուծություններում, ժողովների ու համագումարների որոշումներում, ժողովրդախոսակցական լեզվում։ Նրանք ավելի սակավ են հանդիպում գիտական գրականության մեջ, քաղաքական հոդվածներում։ Կիրառությունները պայմանավորվում են նրանց ունեցած ոճական առանձնահատկություններով, որոնք նույնպես ուսումնասիրության կարիք են զգում։